

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/7**

**3 մայիսի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Հովսեփյանի 04.04.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 313754/11 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Արթուր Հովսեփյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արթուր Հովսեփյանը հայտնում է, որ 2015թ-ի 4-րդ եռամսյակի համար հարկային մարմինն ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկը համապատասխան ժամկետում չի ներկայացրել:

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 313754/11 որոշմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 դրամի չափով, որը փոստային առաքմամբ ծանուցվել է 31.03.2016թ-ին: Վարչական տույժը նշանակվել է իրավախախտումը կատարելու օրվանից երկու ամիս հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Ա/Ձ Արթուր Հովսեփյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 313754/11 որոշումը:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 23.02.2016 թ-ի 199 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Արթուր Հովսեփյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, որի համար նախատեսված է պատասխանատվություն: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 29.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 313754/11 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արթուր Հովսեփյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը: Նշված փաստն ընդունում է նաև Ա/Ձ Արթուր Հովսեփյանը: Նշված խախտման համար ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ

313754/11 որոշմամբ Ա/Ձ Արթուր Հովսեփյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

29.02.2016թ-ին Որոշումը Ա/Ձ Արթուր Հովսեփյանին է ուղարկվել նախ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա ք.Երևան, Նորք-Մարաշ, Նորք 7-րդ փողոց, տուն 33 հասցեով, սակայն ծրարը «Անհայտ» նշումով 21.03.2016թ-ին հետ է վերադարձվել: Այնուհետև, ճշտելով Ա/Ձ Արթուր Հովսեփյանի հասցեն, Որոշումը կրկին անգամ ուղարկվել է ք.Երևան, Կոմիտաս 44/2 հասցեով, որը նրա կողմից ստացվել է 31.03.2016թ-ին:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ Որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտմամբ, ապա այն հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից պետք է ներկայացվեր մինչև 2016թ-ի հունվարի 20 ներառյալ: Հետևապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումը նրա կողմից թույլ է տրվել 2016թ-ի հունվարի 21-ին, իսկ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի թիվ 313754/11 որոշումը կայացվել է 2016թ-ի փետրվարի 29-ին: Այսինքն, վարչական տույժը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 313754/11 որոշմամբ նշանակվել է իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 313754/11 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ